«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ» ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

2022թ.

Հավելված 1
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ» հիմնադրամի
Գիտական խորհրդի
2022 թվականի նոյեմբերի 02-ի թիվ 11-Լ որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգով կարգավորվում են «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) գիտական հետազոտությունների արդյունավետության բարձրացման նպատակով ինստիտուտի պրոֆեսորադասախոսական անձնակազմի դրամաշնորհային գիտական նախագծերի մրցույթի կազմակերպման և անցկացման հետ կապված իրավահարաբերությունները:
2. Սույն ընթացակարգը մշակվել է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի կանոնադրության և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:
3. Սույն ընթացակարգի դրույթները տարածվում են «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի «Պրոֆեսորադասախոսական անձնակազմի դրամաշնորհային գիտական նախագծերի հայտերի մրցութային գործընթացի վրա:
4. Մրցույթի ֆինանսավորումը իրականացվելու է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի տարեկան բյուջեով հաստատված գիտահետազոտական գործունեության ֆինանսավորման շրջանակներում:

5. Հիմնադրամը գիտական հետազոտությունների իրականացման համար 12-24 ամիս տևողությամբ դրամաշնորհներ կտրամադրի պրոֆեսորադասախոսական անձնակազմից ձևավորված խմբերին:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6. Փորձագետների խումբը ձևավորելու և մրցույթում հաղթող գիտական նախագծի աշխատանքների իրականացման ընթացքը հսկելու նպատակով ինստիտուտի ռեկտորի հրամանով ստեղծվում է **հանձնաժողով** հետևյալ կազմով՝
   - ✓ ինստիտուտի ռեկտոր,
   - ✓ ուսումնագիտական գծով պրոռեկտոր,
   - ✓ վարչաֆինանսական գծով պրոռեկտոր,
   - ✓ գիտահամակարգող բաժնի ներկայացուցիչ,
   - ✓ գիտական քարտուղար:
7. Մրցույթին մասնակցելու համար մասնակիցը գիտահամակարգող բաժին է ներկայացնում «Հայտ» (հավելված 1) և «Ծրագրի նախագիծ» (հավելված 2) բաժիններից բաղկացած փաստաթղթերի փաթեթ:
8. Հայտը պետք է ներառի՝
   1) Սույն ընթացակարգի 22-րդ ենթակետի պահանջերին համապատասխան փաստաթղթերը:
9. Հայտը չի ընդունվում, եթե՝
   1) չի պարունակում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,
   2) չի բավարարում Մրցույթի հրավերի պայմաններին,
   3) խմբի ղեկավարի կողմից նախկինում իրականացված գիտական թեմայի

վերաբերյալ հաշվետվություն չի ներկայացվել կամ վերջինիս վերաբերյալ Հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

10. Թեմայի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները գիտական ամսագրերում, գիտաժողովի նյութերում կամ այլ ձևաչափերով հրապարակելիս անհրաժեշտ է նշել «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի կողմից ստացած աջակցության մասին՝ հետևյալ բովանդակությամբ «*Հետազոտությունն իրականացվել է*

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ֆինանսական աջակցությամբ՝ _____ ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

- The work was supported by the Armenian State Institute of Physical Culture and Sport

- , in the frames of the research project № _____.

- Исследование выполнено при финансовой поддержке Государственного института физической культуры и спорта Армении в рамках научного проекта № _____.»:

11. Համապատասխան նշման բացակայության դեպքում հրապարակումը չի **համարվելու թեմայի արդյունք, հետևաբար չի ընդունվելու Հաշվետվության մեջ:**

12. Ծրագրի նախագծի իրականացման ընթացքում յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ Ծրագրի ղեկավարը Հանձնաժողով է ներկայացվում ընթացիկ Հաշվետվություն: Յուրաքանչյուր տարվա ավարտին ներկայացվում է տարեկան հաշվետվություն, որի հիման վրա Հանձնաժողովը տալիս է եզրակացություն՝ Թեմայի ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության և/կամ դադերցման մասին:

13. Ծրագրի նախագծի իրականացման ընթացքում Հանձնաժողովը կարող է իրականացնել Թեմայի մշտադիտարկում և եզրակացությունը ներկայացնել Գիտական Խորհրդին:

14. Ծրագրի նախագծի ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին եզրակացություն տալիս՝ Հանձնաժողովը պետք է հաշվի առնի մշտադիտարկման արդյունքները:

15. Ծրագրի նախագծի ավարտից հետո Հանձնաժողով է ներկայացվում ամփոփիչ Հաշվետվություն, որի հիման վրա Հանձնաժողովը տալիս է եզրակացություն՝ Հաշվետվությունն ընդունելու կամ մերժելու մասին:

3. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

16. Խմբի բոլոր անդամները պետք է հանդիսանան «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի աշխատակիցներ:

17. Խմբի ղեկավար պետք է ունենա գիտական աստիճան, Հիմնադրամում առնվազն հինգ տարվա գիտական կամ գիտամանկավարժական գործունեության ստաժ և վերջին հինգ տարիների ընթացքում միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի ցանկում ընդգրկված գրախոսվող ամսագրերում հրատարակված առնվազն 5 հոդված կամ 2 առնվազն հինգ տպագրական մամուլ ծավալով, Հիմնադրամի Գիտական Խորհրդի երաշխավորություն ունեցող և ISBN նշումով հրապարակում (մենագրություն):
18. Խմբում պետք է ընդգրկվի մինչև 35 տարեկան առնվազն մեկ մասնագետ՝ գիտաշխատող, ասպիրանտ (հայցորդ), մագիստրոս կամ մագիստրանտ:
19. Խմբի անդամները (ներառյալ ղեկավարը) չեն կարող ընդգրկվել մրցույթին ներկայացված մեկից ավելի հայտերում:
20. Խմբի անունից կարող է հանդես գալ միայն խմբի ղեկավարը:

4. ՀԱՅՏԻ, ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

21. Խմբի ղեկավարը հայտը համաձայն կից հավելված 1-ի և ծրագրի նախագիծը համաձայան կից հավելված 2-ի սահմանված ժամկետում գիտահամակարգող բաժին է ներկայացնում՝ թղթային և էլեկտրոնային տարբերակով (հետևյալ էլ. փոստով՝ **eranuhi.simonyan@sportedu.am)** :
22. Գիտահամակարգող բաժին են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը.
    1) Խմբի ղեկավարի հայտը և ծրագրի նախագիծը,
    2) Ամբիոնի նիստի արձանագրության դրական եզրակացությամբ քաղվածքը,
    3) Հիմնադրամի ֆակուլտետի խորհրդի նիստի դրական եզրակացությամբ արձանագրության քաղվածքը:
    4) Խմբի կատարողների անձնագրերի պատճենները, ինչպես նաև վերջին դիպլոմի պատճենը, իսկ ասպիրանտ կամ մագիստրանտի հանդիսանալու դեպքում՝ տեղեկանք՝ մասնագիտությանը և ուսման տարվա նշումով,
    5) Խմբի ղեկավարի ինքնակենսագրական տվյալները (CV),
23. Ծրագրերի նախագծերը պետք է պարունակեն հետևյալ տեղեկություններ.
    1) թեմայի անվանում,

2) ներածություն,
3) հետազոտքության նպատակ և խնդիրներ,
4) հետազոտքության մեթոդներ,
5) աշխատանքի ծավալներ և դրանց իրականացման ժամկետներ,
6) նյութատեխնիկական ռեսուրսներ,
7) ակնկալվող արդյունքներ,
8) ավարտական ձևերի վերաբերյալ,
9) կցված նախահաշիվներ:

24. Ծրագրերի նախագծերում պետք է առանձնացվեն փուլեր՝ նշելով դրանց իրականացման ժամկետներն ու առաջադրանքները, տեխնիկատնտեսական ցուցանիշները և ֆինանսավորման ծավալները՝ համապատասխան հաշվարկներով ու հիմնավորումներով:
25. Խմբի անդամների աշխատանքի ամսական վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են անհատական իրավական ակտերով:
26. Նախահաշվի «Այլ ծախսեր» բաժնի «Սարքեր, նյութեր և ծառայություններ» ենթաբաժնով կարող են նախատեսվել գիտական սարքավորումների, հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի ձեռքբերման և/կամ ծառայությունների ծախսեր: Խմբի ղեկավարը իրավաբանական անձանց հետ կարող է կնքել ծառայությունների մատուցման պայմանագիր՝ այն համաձայնեցնելով Ինստիտուտի ղեկավարության հետ:
27. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Գործուղումներ» ենթաբաժնով նախատեսվող գումարը կարող է օգտագործվել ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա գիտական միջոցառումներին մասնակցելու համար:

5. ՀԱՅՏԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

28. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամում պրոֆեսորադասախոսական անձնակազմի դրամաշնորհային գիտական նախագծերի մրցույթն անցկացնելու նպատակով ստեղծվում է փորձագիտական խումբ:

29. Մրցույթին ներկայացված հայտերի ուսումնասիրությունը և դրանց համապատասխանությունը մրցույթի պայմաններին իրականացվում է Գիտահամակարգող բաժնի կողմից:
30. Գիտահամակարգող բաժինը համապատասխանության և/կամ անհամապատասխանության վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում է Հանձնաժողովին՝ քննարկման նպատակով:
31. Հանձնաժողովի որոշմամբ հաստատվում է Մրցույթի պայմաններին բավարարող և գիտական փորձաքննության ենթակա Հայտերի ցանկը:
32. Հայտերը գիտական փորձաքննության է ենթարկվում է Հանձնաժողովի առաջարկով առնվազն երեք փորձագետների կողմից:
33. Փորձագետները պետք է ունենան գիտական աստիճան, նրանցից առնվազն մեկը պետք է լինի գիտությունների դոկտոր:
34. Հանձնաժողովը, անհրաժեշտության դեպքում, գիտական փորձաքննության նպատակով կարող է ներգրավել անկախ փորձագետի՝ հրավիրելով ոլորտի առաջատար մասնագետներից:
35. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում են Թեմայի արդի վիճակը, նորույթը, ազդեցությունը ոլորտի զարգացման վրա, իրականացման ժամկետների հիմնավորվածությունը, մեթոդիկայի հիմնավորվածությունը, Նախահաշվի հիմնավորվածությունը, Խմբի ղեկավարի և կատարողների մասնագիտական որակավորումը և համապատասխանությունը Թեմային, ինչպես նաև Մրցույթի առանձնահատկություններից բխող այլ հարցեր:
36. Նախագծերի գնահատումը իրականացվում է համաձայն հաստատված ձևաթղթի և չափանիշների (հավելված 4): Նախագծի յուրաքանչյուր բաժին գնահատվում է առավելագույնը 5 միավորով՝ (0.5 միավոր միջակայքով), իսկ վերջնական գնահատումը տրվում է դրանց հանրագումարով
37. Եթե փորձագետների հանրագումարային միջին գնահատականի տարբերությունը թեմաների միջև 5 միավորից պակաս է ապա նշանակվում է փորձաքննության 2-րդ փուլ՝ ներգրավվելով փորձագետների նոր խումբ:
38. Փորձագիտական խումբը 10-օրյա ժամկետում իրականացնում է նախագծերի փորձաքննությունը՝ լրացնում փորձագիտական գնահատման ձեվաթուղթը

(հավելված 5) և ստորագրած ու սկանավորված տարբերակով ուղարկում գիտահամակարգող բաժնի էլեկտրնային հասցեյով:

6. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

39. Ինստիտուտի և երաշխավորված Թեմայի ղեկավարի միջև կնքվում է գիտահետազոտական գործունեություն իրականացնելու նպատակով Ծառայությունների մատուցման պայմանագիր:
40. Սույն ընթացակարգը ուժի մեջ է մտնում Գիտական խորհրդի կողմից հաստատվելու օրվան հաջորդող օրը:
41. Սույն ընթացակարգում փոփոխություններ և լրացումներ կատարվում են Գիտական խորհրդի որոշմամբ:

Հավելված 1

Հ Ա Յ Տ

ՀՖԿՍՊԻ - Ի ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ

ՆԱԽԱԳԾԻ

Նախագծի անվանումը

Ամբիոնը (ամբիոնները)	
Իրականացման ժամկետը (ամիսներ)	
Կատարողների թիվը՝ ներառյալ ղեկավարը	
ֆինանսավորման ծավալը	

ՆԱԽԱԳԾԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Ազգանունը, անունը, հայրանունը	
Ամբիոնը (պաշտոնը)	
Ծննդյան տարեթիվը	
Գիտական աստիճան, գիտական կոչում	
Վերջին 5 տարում հրատարակված գիտական աշխատությունների քանակ *	
Վերջին 5 տարում մասնակցություն դրամաշնորհների (ղեկավար կամ անդամ, անվանումը, որ կազմակերպությունն է տրամադրել, ժամկետը, ավարտված լինելը) * *	

Հեռախոսահամար (բջջային)	
Էլեկտրոնային հասցեն	

ՆԱԽԱԳԾԻ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Ազգանուն, անուն, հայրանուն	
Ամբիոն (աշխատանքի վայր), պաշտոն	
Ծննդյան տարեթիվ	
Գիտական աստիճան, գիտական կոչում	
Վերջին 5 տարում հրատարակված գիտական աշխատանքների քանակ *	
Վերջին 5 տարում մասնակցություն դրամաշնորհների (ղեկավար կամ անդամ, անվանումը, որ կազմակերպությունն է տրամադրել, ժամկետը, ավարտված լինելը) * *	
Հեռախոսահամար (բջջային)	
Էլեկտրոնային հասցեն	

* Ներկայացնել մրցութային հանձնախմբին հրատարակված գիտական աշխատանքների առանձին ցուցակ՝ հաստատված ԲՈՒՀ-ի Գիտական քարտուղարի կողմից (ըստ Հավելված 1-ի ձևանմուշի)

* * Ներկայացնել մրցութային հանձնախմբին ըստ Հավելված 1-1-ի ձևանմուշի

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

№	Անուն, հայրանուն, ազգանուն,	Պաշտոն	Գիտական աստիճան, կոչում
1.			
2.			
3.			
4.			

ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ *(ՆԵՐԱՌՅԱԼ ԲՈԼՈՐ ՀԱՐԿԵՐԸ)*

	Մասնակիցների վարձավճարներ						
№	Ազգանուն, անուն, հայրանուն	202 թ.			202 թ.		
		ամսական	ամիսների քանակ	ընդհանուր գումար	ամսական	քանակ	ընդհանուր գումար
1.							
2.							
3.							
4.							
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ						
Այլ ծախսեր							

2. ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ *(100.0 հազար դրամը գերազանցող ծախսերը հիմնավորել նախահաշվի մեկնաբանության մեջ)*		202 թ.	202 թ.
1.			
2.			
3.			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ			
3. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ *(ծախսերը հիմնավորել նախահաշվի մեկնաբանության մեջ)*			
1.			
2.			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ			
4. ՀԱՎԵԼՅԱԼ ԾԱԽՍԵՐ (*այլ ծախսերի գումարի մինչև 5 %*)			
ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ			

ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սարքավորումներ, նյութեր և ծառայություններ

Գործուղումների մանրամասները

№	Գործուղվողի Ա.Ա.Հ.	Նպատա-կը	Վայրը	Ժամ-կետը	Անհրաժեշտ գումարը		
					Ճանապա-հածախս	Օրապա-հիկ	Գիշեր-վարձ
1.							
2.							
3.							

Մեկնաբանություն (հիմնավորում)

Խմբի ղեկավարի ստորագրություն

_____

«____» _____ 202 թ.

Ց Ո Ւ Ց Ա Կ

ՀՖԿՍՊԻ-ի _____ ամբիոնի

դասախոս _____ վերջին 5 տարվա

գիտական աշխատանքների

№	Աշխատանքի անվանումը	Միջազգ. գիտական շտեմարանի անվանումը	Գրականության աղբյուրը, հրատարակ. վայրը, տարեթիվը, համարը, էջերը	Ծա-վալը	Համահեղի-նակները
1	***2***	***3***	***4***	***5***	***6***
1.					
2.					
3.					
4.					
5.					
6.					

Հեղինակ՝

_____

Ցուցակը ճիշտ է

_____ _____

Ամբիոնի վարիչ՝

Ա.Ա.Հ.

ՀՖԿՍՊԻ-ի գիտական քարտուղար

_____

Ա.Ա.Հ.

«_____ » _____ 202 թ.

ՎԵՐՋԻՆ 5 ՏԱՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆՈՐՀԸ

Դրամաշնորհնորհի անվանումը

Դրամաշնորհնորհը տրամադրած կազմակերպության անվանումը

Դրամաշնորհնորհի ժամկետը /սկիզբը, ավարտը/

Սկիզբը	Ավարտը	Ընդհանուր գումարը

Դրամաշնորհի մասնակցի Ա.Ա.Հ. ստորագրություն

Հավելված 2

ՀՖԿՍՊԻ - Ի ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

Ներկայացնել մինչև 10 էջ՝ ներառյալ տրամագրեր, նկարներ, գրականություն:

Տառատեսակը՝ GHEA Grapalat, տառաչափը՝ 12, միջտողային տարածությունը՝ 1:

1. Թեմայի անվանում

2. Առանցքային բառեր *(8-10 բառ)*

3. Ներածություն (*հիմնախնդրի արդի վիճակի վերլուծություն, մշակվածության աստիճան, թեմայի արդիականության հիմնավորում)* ***1 -1,5 էջ***

4. Հետազոտության օբյեկտ, առարկա, գիտական նորույթ, տեսական և կիրառական նշանակությունը *(1 -1,5 էջ)*

5. Հետազոտության նպատակ և խնդիրներ (*մինչև 1 էջ)*

6. Հետազոտության մեթոդներ (*մինչև 0,5 էջ****)***

7. Հետազոտության ծրագիր *(գործողությունների փուլերը, հերթականությունը, յուրաքանչյուր փուլում ակնկալվող արդյունքը, վերջնարդյունքներ****) 1,5-2 էջ***

8. Օրացուցային պլան *(ըստ եռամսյակների՝ համաձայն ձևանմուշի *)*

9. Առկա և անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներ *(տեխնիկական միջոցներ, սարքավորումներ)* ***մինչև 0,5 էջ***

10. Միջամբիոնային (*միջբուհական, միջգերատեսչական, միջազգային համագործակցության պատկահարմարություն հիմնավորում****) համագործակցություն*** *(մինչև 0,5 էջ)*

11. Տվյալ ուղղությամբ խմբի ձեռքբերումները (*մասնակցություն նախկինում դրամաշնորհային մրցույթներին, դրանց արդյունքները, թեմային համապատասխան հիմնական հրապարակումները)* ***մինչև 0,5 էջ***

12. Ակնկալվող արդյունքների հանրայնացում (*քանակական և որակական ցուցանիշներ՝ հրապարակումներ, գիտաժողովներ, ներդրման ակտեր, արտոնագիր, հեղինակային իրավունք)*

մինչև 0,5 էջ

13. Գրականություն (*5-10 գրական աղբյուր*)

Խմբի ղեկավարի ստորագրություն

_____

«____» _____ 202 թ.

Ձևանմուշ *

ԳԻՏԱԿԱՆ ՆԱՂԱԳԾԻ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

2022-2023 թթ.

№	Միջոցառման անվանում	Կատարման ժամկետը	Կատարողները	Նշում կատարման մասին [1]
1.				
2.				

[1] Օրացուցային պլանի համապատասխան միջոցառումը ժամկետում չկատարելու դեպքում խմբի ղեկավարը ներկայացնում է գրավոր բացատրություն

Հավելված 3

ՀՖՍԿՊԻ - Ի ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Չ Ա Փ Ա Ն Ի Շ Ն Ե Ր

1. **Նախագծի թեմայի արդիականություն և հիմնավորվածություն**

   Գնահատվում է նախագծի գիտական բովանդակությունը, թեմայի արդիականությունը, թեմայի վերաբերյալ գիտական հետազոտությունների վերլուծության աստիճան:

2. **Հետազոտության օբյեկտի և առարկայի հստակ ձևակերպում**

   Ուսումնասիրվող հիմնախնդրի օբյեկտի և առարկայի տարանջատում, ամբողջական և հստակ ներկայացում:

3. **Հետազոտության նպատակի և խնդիրների հստակ ձևակերպում, դրանց ամբողջություն**

   Գնահատվում է հետազոտության նպատակի և խնդիրների ձևակերպման պարզությունը, հստակությունը, դրանց լուծելու իրատեսությունը:

4. **Խնդիրների համապատասխանությունը հետազոտության նպատակին**

   Գնահատվում է առաջադրված նպատակի բովանդակության արտացոլման աստիճանը խնդիրներում:

5. **Հետազոտության մեթոդների համապատասխանությունը առաջադրած խնդիրներին**

   Գնահատվում է պլանավորված մեթոդների հնարավորությունը առաջադրված խնդիրների ամբողջական լուծման համար:

6. **Գիտական նորույթ**

   Գնահատվում է հետազոտության թեմայի նորույթը, նոր ամբողջական և հիմննավորված պատկերացումների ներկայացում:

7. **Հետազոտության տեսական նշանակություն**

   Գնահատվում է նախագծի վերջնական արդյունքների կարևորությունը գիտության տվյալ կամ հարակից ոլորտների տեսության համար:

8. **Հետազոտության կիրառական նշանակություն**

Գնահատվում է հետազոտության արդյունքների գործնականում կիրառման հնարավորությունը, առժեքը, թիրախը:

9. **Հետազոտության իրականացման համար նյութատեխնիկական ապահովման աստիճանը**

Նախագծի նյութատեխնիկական ապահովվածության աստիճանը, այլ բուհերի, գիտական կենտրոնների սարքավորումների օգտագործում:

10. **Հետազոտության ծրագրի իրատեսությունը**

Գնահատվում է ըստ փուլերը գործողությունների Ճիշտ հերթականությունը, փուլում ակնկայվող արդյունքի իրաատեսությունը և հստակությունը, վերջնարդյունքի համապատասխանությունը հետազոտության նպատակին:

11. **Նախագծի պլանավորման հստակություն և ճշգրտություն**

Գնահատվում է նախագծի պլանավորման ցրամաբանությունը, իրատեսությունը, պլանի ամբողջությունը և համապատասխանումը նաղագծի խնդիրներին, գործուղումների նպատակաարմարությունը, նախագծի տարբեր բաժինների ֆինանսավորման ծավալի հիմնավորվածությունը:

12. **Հետազոտության ղեկավարի և խմբի գիտական ներուժը**

Գնահատվում է նախագծի հաջող իրականացման հնարավորությունը՝ պայմանավորված խմբի ղեկավարի մասնագիտական մակարդակով, մագիստրանտների, ասպիրանտների, հայցորդների գիտական թեզերի ղեկավարումով, մասնակիցների օպտիմալ թվաքանակով, թեմային համապատասխան կամ թեմային առընչվող վերջին 5 տարվա հիմնական հրապարակումներով:

13. **Հետազոտության իրականացման համար անհրաժեշտ փորձ**

Գնահատվում է խմբի ղեկավարի և անդամների մասնակցությունը նմամ մրցույթներին, դրանց արդյունքները:

14. **Ստացված արդյունքների հանրայնացնում**

Գնահատվում է ստացված արդյունքների հրապարակումների պլանավորումը գրախոսվող հեղինակավոր մասնագիտական գիտական

պարբերականներում՝ առավելապես Web of Science, Scopus, РИНЦ գիտական շտեմարաններում, ուսումնական ձեռնարկների, դասագրքերի, մենագրությունների հրատարակումը:

15. Միջամբիոնային գիտական համագործակցություն

Գնահատվում է հետազոտական խմբում ՀՖՍԿՊԻ-ի այլ ամբիոնների աշխատակիցների ընգրկումը:

16. Միջբուհական (միջգերատեսչական) գիտական համագործակցություն

Գնահատվում է հետազոտական խմբում ՀՀ-ան այլ բուհերի աշխատակիցների ընգրկումը:

17. Միջազգային գիտական համագործակցություն

Գնահատվում է հետազոտական խմբում արտերկրյա մասնագետների ընգրկումը:

18. Գրականություն

Գնահատվում է թեմային առնչվող և նախագծում ներկայացված գրականության ցուցակը, վերջին 10 տարվա ուսումնասիրված գրականության քանակը:

Հավելված 4

ՀՖՍԿՊԻ - Ի ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԹՈՒՂԹ

Թեմայի անվանում « »

№	Չափանիշներ	Գնահատական
1.	Նախագծի թեմայի արդիականություն և հիմնավորվածություն	
2.	Հետազոտության օբյեկտի և առարկայի հստակ ձևակերպում	
3.	Հետազոտության նպատակի և խնդիրների հստակ ձևակերպում, դրանց ամբողջություն	
4.	Խնդիրների համապատասխանություն հետազոտության նպատակին	
5.	Հետազոտության մեթոդների համապատասխանություն առաջադրած խնդիրներին	
6.	Գիտական նորույթ	
7.	Հետազոտության տեսական նշանակություն	
8.	Հետազոտության կիրառական նշանակություն	
9.	Հետազոտության իրականացման համար նյութատեխնիկական ապահովման աստիճան	
10.	Հետազոտության ծրագրի իրատեսություն	
11.	Նախագծի պլանավորման հստակություն և ճշգրտություն	
12.	Հետազոտության ղեկավարի և խմբի գիտական ներուժ	
13.	Հետազոտության իրականացման համար անհրաժեշտ փորձ	
14.	Ստացված արդյունքների հանրայնացնում	
15.	Միջամբիոնային գիտական համագործակցություն	
16.	Միջբուհական (միջգերատեսչական) գիտական	

	համագործակցություն	
17.	Միջազգային գիտական համագործակցություն	
18.	Գրականություն	
	Հանրագումար	

Փորձագետ՝ ——————— / /

Գիտ. աստիճան, գիտ.կոչում ստորագրություն Ա.Ա.Հ.

« » 202 թ.

ՆԱԽԱԳԾԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատական (միավոր)	Չափանիշներ
5 – Գերազանց	Նախագծի բաժնի բովանդակությունը լիովին համապատասխանում է տվյալ պահանջին, առկա թերությունները չնչին են:
4 - Լավ	Բաժնի բովանդակությունը առաջադրված պահանջներին համապատասխանում է որոշակի վերապահումներով:
3 - Միջին	Բաժնի բովանդակությունը հիմնականում բավարարում է առաջադրված պահանջին, սակայն կան զգալի թվով անհամապատասխանություններ:
2 – Միջինից ցածր	Նախագծի բաժնի բովանդակությունը բավարար չէ պահանջի վերաբերյալ ամբողջական պատկեր կազմելու համար:
1 - Վատ	Բաժնի բովանդակությունը ներկայացված է մակերեսորեն և

	խիստ անորոշ:
0 - Շատ վատ	Բաժնով նախատեսված պատասխանը բացակայում է կամ այն չի կարող որոշվել ներկայացված բովանդակությամբ:

Գնահատումը ՝ յուրաքանչյուր չափանիշը՝ առավելագույնը 5 միավորով, 0,5 միավորի տարբերության հնարավորությամբ: Այսպես, բաժնի աշխատանքը կարող է գնահատվի օրինակ՝ 4,5 միավոր: